

ՍԱՄԿԵԼ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔԱՐԱՇԱՄԲԻ ՄԵԾ ԴԱՄԲԱՆԱԲԼՐԻ ԱՐԾԱԹԵ ԳԱՎԱԹԻ
ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՈՏԻՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ

1987թ. աշնանը ՀՀ ԳԱՄ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ու Երևան քաղաքի հիմնադրման «Էրեբունի» թանգարանի համատեղ արշավախմբը (ղեկ. պատմական գիտությունների թեկնածու Վ. Հովհաննիսյան) Քարաշամբի դամբանադաշտում (Կոտայքի մարզի համանուն գյուղի մոտ) ուսումնասիրեց միջին բրոնզեդարյան մի մեծ դամբանաբլուր: Ի թիվս այլ գտածոների հայտնաբերվեցին նաեւ թանկարժեք մետաղե բարձրարվեստ իրեր՝ պերճանքի առարկաներ, իշխանության խորհրդանշաններ ու անոթներ:

Միջին բրոնզեդարյան ոսկերչական արվեստի իսկական զլուխգործոց է Քարաշամբի արծաթե գավաթը (նկ. 1.): Այն ունի վերից վար աստիճանաբար նեղացող գլանաձեւ իրան, 13,2 սմ բարձրություն եւ կշռում է 219 գրամ:




Նկ. 1.

Գավաթի իրանը պարուրված է զարդագոտիների վեց հորիզոնական շարքերով (նկ. 2.): Դրանցից առաջինը պատկերում է վարազի որսի տեսարան, երկրորդը՝ ծիսահմայական խնջույք, պատերազմ, գերու ուղեկցում, երրորդը՝ հաղթանակի ու հակառակորդների խոշտանգումների տեսարաններ: Չորրորդ եւ վեցերորդ գոտիները պատկերում են առյուծների ու հովազների, իսկ

հինգերորդը կազմված է երկրաչափական զարդանախշից՝ երեսունութ թերթիկանի վարդակից:

Քարաշամբի արձաթե գավաթը իր բարձրարվեստ ու բազմասյուժե պատկերագրությամբ հայտնաբերման օրվանից արժանացել է մասնագետների ուշադրությանը¹: Փորձելով մեկնաբանել գավաթի պատկերային հորինվածքը Վ.Յովհաննիսյանը հիմնական շեշտադրումն արել է թեմատիկ բազմազանությամբ աչքի ընկնող երկրորդ ու երրորդ պատկերագոտիների վրա՝ որոնցում զարգացող գործողությունների մեկնակետը տեսնում է առաջին գոտու վարազի որսի տեսարանում²: Ըստ հեղինակի, հերոսի կողմից վարազի որսը ու նրա սպանությունը պատճառ են եղբայրասպան պատերազմի, որի ընթացքում նրա մասնակիցներից շատերը գոհվում են, իսկ կողմերից մեկը հաղթող է դուրս գալիս³: Վ. Յովհաննիսյանի գտնում է, որ գավաթին պատկերված գոտեմարտը ինչ-որ առասպելական պատերազմի արտացոլում է, որի մասին հիշողությունները հետագայում տեղափոխվել են դիցաբանության ասպարեզ⁴: Յ.Սիմոնյանի կարծիքով գավաթի վրա պատկերված է պատմական հենքի վրա հյուսված մի ամբողջական էպոս-հերոսապատում, որը ներկայացնում է միջին բրոնզի դարի



Նկ. 2.

կյանքի կենդանի պատառիկներ⁵: Գավաթի երկրորդ ու երրորդ գոտիներն իրենց թեմատիկ բազմազանությամբ մի տեսակ ստվերում են կենդանական թեմաներով՝ առյուծներ ու հովազներ պատկերող, զարդագոտիները: Գավաթի առաջին զարդագոտու առյուծների ու հովազների պատկերները Վ. Յովհաննիսյանը մեկնաբանում է որպես հիմնական գործողությունը (որսի տեսարան) լրացնող մանրամասների՝ համարելով դրանք հերոսին օգնության հասած

գերբնական ուժերի (նախնիների հոգիների) այլաբանական կերպարներ⁶։ Բուրխարդ Բրենտյեսը այս գոտու կենդանական պատկերները, որոնցից երկուսին նա համարում է որսորդին օգնության հասած երկարավուտք որսի շներ, կապում է տարվա ամիսների հետ⁷։ Բայց այս տեսակետը խիստ թուուցիկ է եւ չհիմնավորված։ Նշենք, որ այս գոտում կա ընդամենը շան մեկ պատկեր՝ որսորդի հետեւում, իսկ մյուսները առյուծների ու հովազների պատկերներ են, ինչի մասին են վկայում այդ կենդանիներին բնորոշ հատկանիշները՝ բաշերը եւ մորթու վրայի բծերը։

Գավաթի առաջին, չորրորդ եւ վեցերորդ գոտիներում առյուծների ու հովազների ֆիգուրների հաջորդական տեղաբաշխումը, ինչպես նաեւ առաջին ու վեցերորդ գոտիներում առյուծի եւ հովազի հատկանիշների միաձուլւ արտահայտումը մեկ կերպարում, հիմք են հանդիսացել Վ. Հովհաննիսյանի համար դրանք նույնացնելու հին արեւելյան այն պատկերացումների հետ, որոնցում այս կենդանիները ներկայանում են որպես ամուսնական զույգ⁸։ Այս տեսակետի հետ համամիտ են մասնագետներից շատերը⁹։ Սակայն, եթե ընդունենք նշված տեսակետը եւ Քարաշամբի գավաթը զարդարող առյուծների ու հովազների պատկերները համարենք ամուսնական զույգեր, որը կարելի է կապել նաեւ պտղաբերության հետ, ապա, առաջ են գալիս հետեւյալ հարցերը.

1. ինչու՞ են չորրորդ գոտու իրար հաջորդող երկու հովազների ֆիգուրաները միմյանցից բաժանված ռազմի պարագայով՝ վահանով, այլ ոչ թե պտղաբերություն խորհրդանշող որեւէ պատկերով,
2. ինչո՞վ բացատրել առյուծների ու հովազների զուգավորման տեսարան համարվող¹⁰ վեցերորդ գոտում առյուծ առաջնորդի միայնակ՝ առանց զույգի, հանդես գալը,
3. ինչու՞ են վերջին՝ վեցերորդ, գոտու առյուծների ու հովազների զույգերը պատկերված «հերալդիկ դիմակայության» դիրքով¹¹,
4. վերջապես ինչու՞ են առաջին գոտում վարազին հալածող առյուծն ու հովազը հանդես գալիս հակադիր կողմերում։

Այս հարցադրումները մտորելու տեղիք են տալիս եւ հնարավորություն են ընձեռում վերանայելու կենդանիների հետ կապված Վ. Հովհաննիսյանի

տեսակետը: Փորձելով գտնել նշված հարցերի պատասխանները՝ մեր ուշադրությունը գրավեց նախ այն, որ.

1. երրորդ գոտու «սրբազան հոշոտման» տեսարանի աջից պատկերված, փարթամ բաշով, առյուծը հաղթող կողմի՝ նիզակակիրների առաջնորդի, այլաբանական կերպար է համարվում¹²,

2. երրորդ գոտու առյուծը թե՛ պատկերման դիրքով, թե՛ ոճով նույնությամբ կրկնվում է վեցերորդ գոտում, եւ մեր կարծիքով միեւնույն խորհրդանշական իմաստն է կրում,

3. առաջին գոտու որսի տեսարանում առյուծը հանդես է գալիս որսորդի կողմից եւ, ինչպես վերջինս, պատկերված է միեւնույն՝ աջակողմյան դիրքով:

Ուշադրության է արժանի նաեւ այն, որ.

1. առաջին գոտում հովազը ներկայանում է առյուծին հակադիր կողմից ու հակառակ դիրքով՝ ինչպես երրորդ պատկերագոտու սրակիրները (ծախ կողմից),

2. վեցերորդ գոտու գիշատիչների չորս հերալդիկ զույգերում նույնպես հովազները հանդես են գալիս առյուծներին հակադիր դիրքով:

Բացի այդ գավաթին պատկերված առյուծները կարելի է բաժանել երկու խմբի՝ փարթամ (առաջին, երրորդ ու վեցերորդ գոտիներ) եւ առավել պարզ ու սխեմատիկ բաշերով առյուծների (առաջին, չորրորդ ու վեցերորդ գոտիներ): Առյուծների նման պատկերումը մեզ հիմք է տալիս դրանք նույնացնելու գավաթի երկրորդ ու երրորդ գոտիների առաջնորդների ու նրանց հպատակների հետ (երկրորդ գոտու ծիսահմայական խնջույքի ու երրորդ գոտու խոշտանգումների թեմաների առաջնորդներն իրենց չափերով առավել խոշոր են քան մյուս մարդկային ֆիգուրները): Հետեւաբար կարելի է ասել, որ կենդանական գոտիներում փարթամ բաշով պատկերված է առյուծ առաջնորդը, իսկ սխեմատիկ բաշով՝ վերջինիս գիմակիցները:

Այս դիտարկումներից ելնելով, գավաթին պատկերված առյուծն ու հովազը կարելի է համապատասխանաբար հաղթող հերոսի ու նրա հակառակորդի եւ դրանց ենթակա նիզակակիրի ու սրակիրների կենդանակերպ խորհրդանիշը համարել: Որպես այս տեսակետի առաջին մասի հիմնավորում կարելի է նշել, որ հին խեթական ավանդույթներում առյուծն ու հովազը դիտարկվել են որպես

արքայի երկու կենդանակերպ խորհրդանիշներ¹³, իսկ գավաթին պատկերված նիզակակիրներն ու սրակիրները, ինչպես ընդունված է, ազգակից ցեղեր են համարվում¹⁴: Մեր կրծիքով այդ են վկայում նաեւ գավաթի առաջին ու վերջին գոտիներում հանդիպող առյուծներին ու հովազներին բնորոշ գծերի միաձուլմամբ խառնածին կենդանիները:

Այս դիտարկումները հիմք են նորովի մեկնաբանելու Քարաշամբի արձաթե գավաթի կենդանակերպ զարդագոտիների հորինվածքը՝ դրանով իմաստավորելով գիշատիչ կենդանիների պատկերները:

Այսպիսով, կարելի է ասել, որ Քարաշամբի արձաթե գավաթի որսի տեսարանին, հերոս-որսորդից ու նրա պահապան շնից բացի, մասնակցում են նաև արքայի՝ նիզակակիրների, ու նրանց հակառակորդ սրակիրների կենդանակերպ խորհրդանիշները՝ առյուծներն ու հովազները:

Առաջին գոտու վիրավոր վարազի հալածման տեսարանում առյուծի ու հովազի հակադիր պատկերումը եւ դրանց համապատասխան կապը նիզակակիրների ու սրակիրների հետ, հնարավորություն են տալիս այս տեսարանը դիտարկել որպես որսի համար երկու ազգակից ցեղերի միջեւ մղվող պայքարի այլաբանական մեկնաբանում: Այս պատկերախումբը կարելի է նույնացնել հնդեւրոպական դիցաբանությունում տարածում գտած վարազի որսի բաժանման թեմայի հետ, որը բերում է երկու ազգակից ցեղերի թշնամացմանը եւ պատերազմին¹⁵: Այս տեսակետի օգտին է վկայում նաեւ կենդանական գոտիներից միջինում (չորրորդ գոտի) վահանի առկայությունը, որը մեր կարծիքով ոչ թե «թեմայի բաժանարարի դեր է կատարում»¹⁶, այլ ունի որոշակի խորհրդանշական իմաստ: Այս եւ գավաթին պատկերված նմատառիկայ մյուս վահանները Վ. Հովհաննիսյանի կարծիքով պատրաստվել են փայտե հիմքի վրա հաստ կաշվի ձգման եղանակով¹⁷: Նշենք, որ կաշվով (այծի) պատած վահանը Աթենաս աստվածուհու բնորոշ հատկանիշն է (ատրիբուտ), իսկ Աթենասը հունական դիցարանի իմաստնության ու արդար պատերազմի աստվածուհին է, որի նախատիպն է միկենյան ժամանակաշրջանի վահանով պատկերված աստվածուհին¹⁸: Վահանը դիտելով որպես պատերազմի աստվածուհու խորհրդանիշ, ինչպես նաեւ ելնելով Աթենասի ու Քարաշամբի գավաթի չորրորդ գոտում հանդիպող վահանների նմանությունից (երկուսն էլ

կաշեպատ են), վերջինս կարելի է համարել հակամարտության ու պատերազմի խորհրդանիշ:

Վերջին՝ վեցերորդ, գոտու առյուծների ու հովազների չորս հերալդիկ զույգերը նույնպես, առաջին հայացքից, կարելի է համարել մենամարտերի պատկերում, հատկապես, երբ դրանք թվապես նույնական են երկրորդ ու երրորդ պատկերագոտիներում հանդիպող մարտնչող ռազմիկների զույգերի հետ: Սակայն՝ ա) գիշատիչների դեպի ետ՝ պոչերի ծայրը, ուղղված գլուխները, բ) բոլոր զույգերում առյուծների գերիշխող դիրքը (նրանք ասես առջևի թաթերով բռնել են հովազներին), գ) առյուծ առաջնորդի հաղթական ու վեհ կեցվածքը, թույլ են տալիս ենթադրելու, որ այս գոտում պատկերված է վերը ծավալված գործողությունների տրամաբանական ավարտը՝ հաղթանակի, հպատակեցման ու միավորման այլաբանական մեկնությունը:

Կենդանական գոտիների քննությունից ելնելով կարելի է ասել, որ վարազի որսը եւ դրա բաժանման շուրջ «առյուծներ»-ի ու «հովազներ»-ի միջև ծավալված պայքարը նրանց թշնամացման պատճառ են, ինչը ավարտվում է «առյուծներ»-ի հաղթանակով եւ վերջիններիս կողմից «հովազներ»-ի հպատակեցմամբ:

Այսպիսով Քարաշամբի արծաթե գավաթի կենդանական գոտիների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք նույնացնում եւ լրացնում են առաջին, երկրորդ ու երրորդ գոտիների պատկերային հորինվածքը ու ներկայացնում հնդեւրոպական դիցաբանությունից հայտնի վարազի որսի թեմայի ամբողջական ու ավարտուն պատկերը:

Գրականություն

¹ В. Э. Оганесян, Серебряный кубок из Карашамба, ИФЖ, № 4, Ереван, 1988, с. 145-160; Simonian Hakob, Vor-und friihgeschichtliche Funde auf dem Gebiet Armeniens, Armenien. Wiedderentdeckung einer alten Kulturlandschaft / Museum Bochum 14. 1 bis 17. 4. 1995 /, s. 46; Armenie. Tresors de L'Armenie Ancienne. Pasteurs et chefs de duerre au Bronze mooyen / XXIII-XVI sie'cle avant J.-C. / par A. Piliposian, Paris 1996, p. 65-66; Burchard Brentjes, Bemerkungen zum Silberbecher von Karasamb und seinem Umfeld, Altorientalische Forschungen, 23, 1996, 1, s. 181-194; Պ. Ավետիսյան, «Հին Հայաստանի ոսկին» հոդվածների ժողովածու (տրված է հրատարակման) :

² Վ. Է. Հովհաննիսյան, Աշխ., էջ 145-160.

³ Նույն տեղում, էջ 157:

⁴ Նույն տեղում, էջ 153:

⁵ Simonian Hakob, *Wor-und friihgeschichtliche Funde auf dem Gebiet Armenians, Armenien. Wiedderentdeckung einer alten Kulturlandschaft /Museum Bochum 14. 1 bis 17. 4. 1995, s. 46.*

⁶ Վ. Է. Հովհաննիսյան, *Գշվ. աշխ., էջ 157:*

⁷ Burchard Brentjes, *Bemerkungen zum Silberbecher von Karasamb und seinem Umfeld, Altorientalische Forschungen, 23, 1996, 1, s. 181-182.*

⁸ Վ. Է. Հովհաննիսյան, *Գշվ. աշխ., էջ 152-153:*

⁹ Պ. Ավետիսյան, «Հին Հայաստանի ոսկին» հոդվածների ժողովածու (տրված է հրատարակման):

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Վ. Է. Հովհաննիսյան, *Գշվ. աշխ., էջ 152:*

¹² Նույն տեղում, էջ 151:

¹³ Նույն տեղում, էջ 155, հղում 45:

¹⁴ Նույն տեղում, էջ 157:

¹⁵ Նույն տեղում, էջ 158-159:

¹⁶ Նույն տեղում, էջ 152:

¹⁷ Նույն տեղում, էջ 148:

¹⁸ *Мифы народов мира, т. 1, М., 1980, с. 125-128.*